

Գ Ր Ա Կ Ա Ն ՈՒ Թ Յ ՈՒ Ն

VIII Դ Ա Ս Ա Ր Ա Ն (102 ժամ)

№№	Թեմայի №№	Սնամթիվ	Դասի թեման	Դասարանում կատարելիք աշխատանքը, նպատակը Դիդակտիկ պարագաներ	Միջառարկայա - կան և ներառարկայական կապեր	Մեթոդներ	Տնային առաջադրանք
1	2	3	4	5	6	7	8
1	1		Մուտքի դաս	Ծանոթանալ գրքի բովանդակությանը, տարվա ընթացքում անցնելիք նյութին		Շրջագայություն՝ գրքի բաժիններով	Գտնել ասույթներ թումանյանի մասին
			ՀՈՎՃԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ (10ԺԱՄ)				
2	1		<u>Թումանյան մարդն ու բանաստեղծը</u> 1. Աշակերտների կարծիքը Թումանյան բանաստեղծի մասին /նախորդ դասարաններում անցածի հիման վրա/ 2. Թումանյանի կյանքը, հասարակական գործունեությունը: 3. Ստեղծագործությունը: 4. Թումանյանի արվեստի բնորոշ կողմերը:	Թումանյանի դիմանկարը, ասույթներ: Բանաստեղծի կենսագրության ուսումնասիրություն, նրա ստեղծագործությունների իմացություն: Թումանյանը ժամանակակիցների հուշերում, այցելություն Թումանյանի տուն-թանգարան	Պատմություն – Մեծ եղեռն Հայաստանի աշխարհ. - Լոռի Կերպարվեստ-Թումանյանի արձանը Երաժշտ.-Թումանյան /«Ա՜ իս, ի՜նչ լավ են սարի վրա»/,Տիգրանյան /«Անուշ»/	Մտագրոհ, դասախոսություն, հարց-պատասխան, մտքերի փոխանակություն «Բազմանիստ»	Կազմել կյանքի ժամանակագրական աղյուսակ, ստեղծագործությունների ցանկ:
3	2		<u>Պոեմ: «Թմկաբերդի առումը» պոեմը</u> 1. Հասկացողություն պոեմի մասին: Պատմողական, քնարական և քնարապատմողական պոեմներ: 2. Նախերգանք և վերջերգ: 3. «Թմկաբերդի առումը» /1902թ. / պոեմի ընթերցում: 4. Բանաստեղծական պատումի յուրահատուկ ձևը:	Պոեմի ժանրի բնորոշում, տեսակները, դրանց կառուցվածքային հատկանիշները՝ նախերգանք, վերջերգ, հեղինակային շեղումներ և այլն, պատմողական պոեմի և պատմվածքի, քնարական պոեմի և բանաստեղծության տարբերությունները: Արտահայտիչ ընթերցում:	Սպենդիարյանի «Ալմաստ» օպերան	Ինսերտ, ընթերցում դադարներով, կանխատեսման աղյուսակ	Կարդալ պոեմը, կազմել նախադասություններ <i>աննկուն, մատաղ, գոռ, խավարչտին, կոչնակ, դալուկ</i> բառերով:

1	2	3	4	5	6	7	8
4	3		<p><u>Պոեմի սյուժեն և գաղափարական բովանդակությունը</u></p> <ol style="list-style-type: none"> 1. Պոեմի կառուցվածքը և սյուժեն: 2. Բեմականացում՝ հիմնված հեղինակային խոսքի և հերոսների երկ խոսությունների վրա: 3. Բարի գործի դրվատումը: 4. Պոեմի գաղափարական բովանդակությունը: 5. Մարդու՝ կյանքում անարատ մարդ մնալու երազանքը: 	<p>Պոեմի բովանդակության վերաշարադրում՝ ըստ դիպաշարի տարրերի, մանրամասն և համառոտ պատում, պատում հերոսների անունից՝ սեփական գործողությունների շարժառիթների մեկնաբանությամբ</p>		<p>Անհատական և խմբային աշխատանք, քառաբաժան</p>	<p>Վերնագրել պոեմի հատվածները: Նախերգանքը և աշակերտի ցանկությամբ որևէ հատված սովորել անգիր:</p>
5	4		<p><u>Պոեմի կերպարները</u></p> <ol style="list-style-type: none"> 1. Թաթուլի, Նադիր շահի և Թմկա տիրուհու կերպարների համեմատական վերլուծություն՝ համապատասխան հատվածների ընթերցմամբ: 	<p>Գրական կերպարների վերլուծություն. հերոսների հոգեբանությունը, վարքագիծը, գործողությունների շարժառիթները</p>		<p>T-աձև աղյուսակ, խմբային աշխատանք, գրավոր հարցազրույց հերոսների հետ, Կրկնակի գրառումների օրագիր</p>	<p>Կազմել պատկերասրահ:</p>
6	5		<p><u>Պոեմի գեղարվեստական արժանիքները</u></p> <ol style="list-style-type: none"> 1. Ռիթմ, հանգ: 2. Սակդիր, փոխաբերություն, համեմատություն: 3. Ճարտասանական հարց և բացականչություն: 4. Չափազանցություն: 5. Շրջադասություն, անշաղկապություն: 	<p>Աշխատանք գեղարվեստական արտահայտչամիջոցների շուրջ Կազմել հումանիշային շարքեր՝ նժույգ, թովիչ, թափառական, աղքատ, տիրուհի, չքնաղ, անարատ:</p>		<p>Խմբային հետազոտություն, համատեղ հետազոտություն</p>	<p>Դուրս գրել ճարտասանական բացականչությունների, շրջադասության, անշաղկապության օրինակներ:</p>
7	6		<p><u>Բալլադ: Թումանյանի «Փարվանա» բալլադը</u></p> <ol style="list-style-type: none"> 1. Հասկացողություն բալլադի մասին: Ժողովրդական լեգենդը՝ բալլադի հիմք: 2. Բալլադի ընթերցում: 3. Բառային աշխատանք /ԲՀ/: 	<p>Ժանրի բնորոշում, բալլադին բնորոշ սյուժեի և անսովոր բովանդակության, երևակայականի և հրաշապատումի ընկալման ունակություն, բալլադի ընթերցում</p>	<p>Կրկն. բալլադ Մահարի, Պուշկին Հայոց լեզու – որոշիչ</p>	<p>Մտագրոհ, ընթերցում դադարներով, կանխատեսումների աղյուսակ</p>	<p>Կարդալ բալլադը: Դուրս դրել ածական + գոյական բառակապակցությունները սովորական որոշիչ – մակդիր սյունակներով:</p>

1	2	3	4	5	6	7	8
8	7		<p><u>Բալլադի սյուժեն և գաղափարական բովանդակությունը</u></p> <ol style="list-style-type: none"> 1. Սյուժեն: 2. Պատումի հեքիաթային տարրերը: 3. Հավերժական սիրո, բարու, բարձրագույն իդեալների խորհրդանիշը բալլադում: 4. Երագի և իրականության հակադրությունը: 5. Ողբերգականը բալլադում: 6. Բալլադի ներքին խորհուրդը. սերունդների դժվարին ու անվախճան ճանապարհը դեպի կատարելություն: 7. Խորհրդանշական պատկերների իմաստը (արցունքից գոյացած Փարվանա լիճ, թիթեռներ): 	<p>Բալլադի բովանդակության վերաշարադրում՝ ըստ դիպաշարի տարրերի, մանրամասն և համառոտ պատում, պատում հերոսների անունից՝ սեփական գործողությունների շարժառիթների մեկնաբանությամբ, նկարագրվածը ավելի մանրամասնելու կարողություն (բնության նկարագրություն)</p>		<p>Քառաբաժան, անհատական տեքստի ստեղծում, համատեղ որոնում (ի±նչն էուշադրությունը գրավել, ի±նչն էլավ տպավորվել, ինչու±)</p>	<p>Նկարագրել Փարվանա արքային ու նրա դասերը՝ ստեղծելով սեփական տեքստ: Անգիր սովորել որևէ հասված:</p>
9	8		<p><u>Բալլադի գեղարվեստական արժանիքները</u></p> <ol style="list-style-type: none"> 1. Ռիթմ, հանգ: 2. Մակդիր, համեմատություն, փոխաբերություն: 3. Շրջադասություն, անշաղկապություն: 4. Նույնասկիզբ, նույնավերջ: 5. Ներքին լարվածություն ունեցող հասվածների առանձնացում: 	<p>Աշխատանք գեղարվեստական արտահայտչամիջոցները տարբերակելու շուրջ: Ցույց տալ այն հասվածները, որտեղ փոխվում է ռիթմը:</p>		<p>Պատկերասրահ, խմբային հետազոտություն</p>	<p>Դուրս գրել փոխաբերությունները, անշաղկապության օրինակները:</p>
10	9		<p><u>Քառյակ: Թումանյանի քառյակները</u></p> <ol style="list-style-type: none"> 1. Հասկացողություն քառյակի մասին: 2. Քառյակների բովանդակությունը: 3. Քառյակների ընթերցում: 4. Յուրաքանչյուր քառյակի բովանդակության մեկնաբանություն: 5. Կյանքի մահվան, անցողիկի ու հավերժի, կատարյալ մարդու, գեղեցիկի, բարու իդեալները Թումանյանի քառյակներում: 6. Բառային աշխատանք: 	<p>Բանաստեղծության կայուն ձևերից մեկի առանձնահատկությունների ուսուցում, արտահայտիչ ընթերցանություն, կարդացածը մեկնաբանելու հմտությունների զարգացում:</p>	<p>Օմար Խայամ</p>	<p>Մտագրոհ, ձևագնդի, խճանկար</p>	<p>Վերնագրել քառյակները: 5-6 քառյակ սովորել անգիր:</p>

1	2	3	4	5	6	7	8
11	10		<p><u>Թումանյանի քառյակների գեղարվեստական արժանիքները</u></p> <p>1. Հանգ: 2. Նույնասկիզբ, նույնավերջ: 3. Ճարտասանական բացականչություն: 4. Հարանունություն:</p>	Աշխատանք գեղարվեստական արտահայտչամիջոցները տարբերակելու շուրջ:		Հնգյակ /քառյակ/, հարց-պատասխան, վիկտորինա /գուշակի՝ ո՞ր քառյակի մասին է խոսքը/	Գրել կարծիք Թումանյանի որևէ ստեղծագործության մասին
ՄՈՒ ԸՆԴՍԱՆ (7ԺԱՄ)							
12	1		<p><u>Մուրացան. «Առաքյալը» վիպակը</u></p> <p>1. Մուրացանի կյանքն ու ստեղծագործությունը: 2. Գաղափար վիպակի մասին: Վիպակի և վեպի, պատմվածքի և վիպակի տարբերությունները Երգիծական վիպակի առանձնահատկությունները: 3. Վիպակի ընթերցում:</p>	Մուրացանի դիմանկարը, ասությունը նրա մասին: Գրողի կենսագրության ուսումնասիրություն, նրա ստեղծագործությունների իմացություն, վիպակի՝ որպես միջին պատմողական ժանրի առանձնահատկությունների վերլուծություն:	«Նոյի ագռավը» պատմվածքը	Մտազրոհ, դասախոսություն, հարց-պատասխան, մտքերի փոխանակություն, ընթերցում դադարներով, կանխագուշակությունների աղյուսակ	Կազմել կյանքի ժամանակագրական աղյուսակ, ստեղծագործությունների ցանկ: Կարդալ վիպակը: Շարունակել աղյուսակի «Ի՞նչ եղավ» բաժինը:
13	2		<p><u>Հայկական գյուղի կյանքն ու բարքերը</u></p> <p>1. Հայ գյուղն ու գյուղացին . ընտրովի հատվածների ընթերցում և մեկնաբանություն: 2. Հայ գյուղացին ու մալականը: 3. Բառային աշխատանք: 4. Վիպակում հանդիպող առածների ու ասցվածքների դուրսգրում:</p>	Արտահայտիչ ընթերցանություն, հատվածների մեկնաբանություն, անձանոթ բառերի դուրսգրում ու բացատրություն, հոմանիշային շարքերի կազմում, բառերի թեմատիկ խմբավորում:		3 բանալի և մեկ կողպեք, Կրկնակի գրառումների օրագիր (մեջբերում-մեկնաբանություն), օգնական աշակերտ	Բնութագրել հայ գյուղն ու գյուղացուն՝ օգտագործելով տեքստի բառերն ու բառակապակցությունները: Ներմուծել սեփական տեսակետը:
14	3		<p><u>Վիպակի սյուժեն</u></p> <p>1. Սյուժեի զարգացումը հակադրությունների սկզբունքով (Մևանա լիճ-Չիբուխլու, հայ գյուղացի-մալական...): ՀԱ 2 (էջ 60): 2. Վիպակի վերնագիրը: Առաքելության ձախողումը: 3. Կառուցվածքը: 4. Վիպակի նախադրության և ավարտի այլ տարբերակներ:</p>	Վիպակի սյուժեի շարադրանք (մանրամասն, համատոտ, գործող անձանց անունից),		Խմբային աշխատանք, հարց-պատասխան, Հնգյակ (վերնագիրը), մեկնողական և դատողական պատում	Շարադրել վիպակի նախադրություն կամ ավարտ:

1	2	3	4	5	6	7	8
15	4		<p><u>«Առաքյալը» վիպակի գաղափարական բովանդակությունը</u></p> <p>1. Հայ գյուղի ողբերգությունը:</p> <p>2. Գյուղը փրկելու Կամսարյանի ծրագրի տխուր վախճանը: Դրա գնահատականը:</p> <p>3. Հայ գյուղն այսօր: Թեմայի արդիականացում: Մտքերի փոխանակություն:</p>	Թեմայի արդիականացում: Գրական երկը հասկանալու, վերլուծելու, կարծիք հայտնելու կարողության զարգացում:		Անհատական և խմբային աշխատանք Զրույց	Դուրս գրել Պետրոս Կամսարյանին բնութագրող բառերը, բառակապակցություններն ու նախադասությունները:
16	5		<p><u>Վիպակի կերպարները</u></p> <p>1. Պ. Կամսարյանի կերպարը (բնութագրել՝ օգտագործելով տանը կատարած գրառումները). կերպարի կերտման երգիծական հնարանքները:</p> <p>2. Գյուղացիները՝ Մոսի, Օհանես, Սայի, Պետի:</p> <p>3. Հմմտ. վարժապետ Մոսի և Կամսարյան:</p> <p>4. Հեղինակի վերաբերմունքը իր հերոսների նկատմամբ:</p>	Գրական հերոսի մասին վերլուծական խոսք կազմելու (գրավոր կամ բանավոր) ունակության զարգացում:		Դ-աձև աղյուսակ, խմբային աշխատանք, գրավոր կամ բանավոր հարցազրույց հերոսների հետ	Շարադրություն՝ «Պետրոս Կամսարյանի կերպարը» վերնագրով:
17	6		<p><u>Վիպակի գեղարվեստական արժանիքները</u></p> <p>1. Տանը հանձնարարված շարադրությունների ընթերցում և գնահատում:</p> <p>2. Հայրենի բնաշխարհի գեղեցկությունը. բնապատկերները վիպակում: Նրանց դերը:</p> <p>3. Վիպակի լեզուն, ոճը: Հերոսների խոսքի առանձնահատկությունները:</p>	Հեղինակի վարպետության, լեզվի և ոճի առանձնահատկությունների ընկալում:		Հեղինակի աթոռ, խմբային աշխատանք	Կազմել բառաշարք, որով կարելի է նկարագրել որևէ ժամանակակից հայ գյուղ:
18	7		<p><u>Արտադասարանական ընթերցանություն. Մուրացանի «Գևորգ Մարգարեանի» վեպը</u></p> <p>1. Վեպի համապատասխան հատվածների քննարկում:</p> <p>2. Նվիրյալ մարդու կերպարը Մուրացանի ստեղծագործության մեջ:</p>			Քննարկում, հարցուպատասխան, խմբային հետազոտություն	Բսահակյանի կյանքն ու գործը. գտնել ասույթներ, կարդալ նրա մասին հուշերի պատառիկներ:
			ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ (11 ԺԱՄ)				

1	2	3	4	5	6	7	8
19	1		<p><u>Ավ. Իսահակյան. «ՄԻ մրահոն աղջիկ տեսա» քանաստեղծությունը</u></p> <p>1. ԱՎ. Իսահակյանի կյանքը, ստեղծագործության հիմնական հատկանիշները. նրա պոեզիայի սիրո, մայրական սիրո և պանդխտության, հայրենասիրական մոտիվները:</p> <p>2. «Մի մրահոն աղջիկ տեսա» քանաստեղծության ընթերցում:</p> <p>3. Բանաստեղծության ստեղծման պատմությունը</p> <p>4. Թեման:</p> <p>5. Գաղափարը:</p> <p>6. Զգացմունքի, տրամադրության զարգացումը: ՀԱ 1-10, 15, 17, 18 (էջ 67-68)</p> <p>7. Բառային աշխատանք. անծանոթ բառերի դուրսգրում, հոմանիշային շարքերի կազմում:</p>	Իսահակյանի դիմանկարը, ասույթներ նրա մասին: Բանաստեղծի կենսագրության ուսումնասիրություն, նրա ստեղծագործությունների իմացություն: Իսահակյանը ժամանակակիցների հուշերում, այցելություն Իսահակյանի տուն-թանգարան: Բանաստեղծության ընթերցում: Քնարական քանաստեղծության, վերլուծություն:	«Արագածին» Երաժշտություն-Երգեր՝ գրված Իսահակյանի խոսքերով Աշխարհագրություն	Մտագրոհ, դասախոսություն, հարց-պատասխան, մտքերի փոխանակություն, Քառաբաժան	Անգիր: Տեղեկություններ Լ. դա Վինչիի և նրա «Ջոկոնդա» կտավի մասին: Լույս ընծայել պատի թերթ՝ նվիրված Իսահակյանին:
20	2		<p><u>Բանաստեղծության գեղարվեստական արժանիքները</u></p> <p>1. Ասմունք և գնահատում:</p> <p>2. Իսահակյանի սիրային այլ քանաստեղծությունների ընթերցում:</p> <p>3. Մակդիր, համեմատություն, փոխաբերություն, հանգ:</p> <p>4. ՀԱ 11, 13 (էջ 67):</p>	Ասմունք, բանաստեղծության գաղափարական բովանդակության ամփոփում, աշխատանք պատկերավորման միջոցների վրա: Տրված մակդիրները փոխարինել որոշիչներով:		Վենի դիագրամ (մակդիր-որոշիչ), խմբային աշխատանք	ՀԱ 12 (էջ 67):
21	3		<p><u>Իսահակյանի «Ռավեննայում» քանաստեղծությունը</u></p> <p>1. Խոսում է Իսահակյանը (էջ 75-76):</p> <p>2. «Ռավեննայում» քանաստեղծ. ընթերցում:</p> <p>3. Գրման տարեթիվը (1926) և տեղը (Ռավեննա): Ինչու է Իսահակյանն իր քանաստեղծությունն անվանել «Ռավեննայում»:</p> <p>4. Հայրենիքի հավերժության գաղափարը: Արարատ լեռը որպես այդ հավերժության խորհրդանիշ:</p> <p>5. Պատկերավորման միջոցներ՝ մ., փոխ., համ., նվազաբերություն, կրկնություն:</p>	Բանաստեղծության ձևի և բովանդակության միասնության ընկալում: Բանաստեղծություն վերլուծություն ՀԱ 1-7, 12 (էջ 67):	Պատմություն Աշխարհագրություն	Զնագնդի, Քառաբաժան	Անգիր: ՀԱ 8 -11 (էջ 67):

1	2	3	4	5	6	7	8
22	4		<p><u>Իսահակյանի «Հավերժական սերը» բալլադը</u></p> <ol style="list-style-type: none"> 1. Խոսում է Իսահակյանը (էջ 68): 2. Տեքստի կազմում՝ օգտագործելով բանալի բառեր (հավերժական սեր, գահ, բամբիշ,...): 2. Բալլադի ժանրային առանձնահատկությունները. «Անթար» խորագրով արևելյան գրույցը իբրև բալլադի հիմք(ՀԱ 14 էջ 68): 3. Բալլադի ընթերցում: 4. Թեման: 5. Գաղափարական բովանդակությունը: Մաքուր ու հավատարիմ, անձնագոհ սիրո գովերգումը: 6. Բառային աշխատանք: 	Նախորդ դասերին անցած նյութի կրկնություն և ամրապնդում, արտահայտիչ ընթերցանություն, գրական երկի վերլուծություն: Տեքստի կազմում բանալի բառերով և համեմատություն բնագրի հետ:	Մահարի Թումանյան Բալլադ Հայոց լեզու – Բառակազմություն Կերպարվեստ	Կանխագուշակությունների աղյուսակ, բանալի բառեր	Կարդալ: ՀԱ 22 (էջ 75): Սովորել նոր բառերը: Պատրաստել հետաքրքիր հարցեր բալլադի սյուժեի և գաղափարական բովանդակության վերաբերյալ:
23	5		<p><u>Բալլադի սյուժեն և գաղափարական բովանդակությունը</u></p> <ol style="list-style-type: none"> 1. Բառային աշխատանք: 2. Բալլադի հատվածների համար վերնագրերի առաջադրում, լավագույնի ընտրություն: 3. Բալլադի սյուժեն (առանձնացնել նախադրությունը, հանգույցը, բարձրակետը, լուծումը): 4. Գաղափարական բովանդակությունը. հարցեր: 5. ՀԱ 6-14 (էջ 74): 6. Կերպարները՝ Էլ –Սաման և Բամբիշը: Էլ –Սամանի մենախոսությունը որպես հավերժական սիրո խոստովանություն: 7. Հմմտ. Թումանյան «Փարվանա» - Իսահակյան «Հավերժական սերը»: 	Բալլադի բովանդակության վերաշարադրում՝ ըստ դիպաշարի տարրերի, մանրամասն և համառոտ պատում, պատում հերոսների անունից՝ սեփական գործողությունների շարժառիթների մեկնաբանությամբ, նկարագրվածը ավելի մանրամասնելու կարողություն (ապարանքի նկարագրություն):	Թումանյան «Փարվանա»	Հարցուպատասխան, քննարկում	Հատված անգիր:

1	2	3	4	5	6	7	8
---	---	---	---	---	---	---	---

24	6	<p><u>Բալլադի գեղարվեստական արժանիքները</u></p> <p>1. Անգիր հատվածներ:</p> <p>2. Բալլադի լեզվաոճական վերլուծություն.</p> <ul style="list-style-type: none"> ❖ ոճավորում (դուրս գրել արևելյան բնաշխարհին հատուկ բառերն ու բառակապակցությունները), ❖ բնապատկերներ, նրանց կապը հերոսի հոգեվիճակի հետ, ❖ պատկերավորման միջոցները (մակդիր, համեմատություն, փոխաբերություն, չափազանցություն, անձնավորում): ❖ ցույց տալ բալլադի I-II և III-IV մասերում օգտագործված մակդիրների տարբերությունը: Պատճառը: 	<p>Աշխատանք գեղարվեստական արտահայտչամիջոցները տարբերակելու շուրջ:</p> <p>Բնապատկերների ազատ շարադրանք՝ սեփական բառապաշարի ավելացմամբ:</p>	<p>Չարենց, «Տաղարան»</p>	<p>Խմբային աշխատանք Պատկերասրահ</p>	<p>ՀԱ 17 (էջ 74):</p>
25	7	<p><u>Իսահակյանի «Մաադիի վերջին գարունը» արձակ պոեմը</u></p> <p>1. Իսահակյանի արձակը. ծանոթ հեքիաթներ ու գրույցներ:</p> <p>2. «Մաադիի վերջին գարունը» արձակ պոեմի ընթերցում:</p> <p>3. Բառային աշխատանք:</p>	<p>Արտահայտիչ ընթերցանություն, անձանոթ բառերի դուրսգրում ու բացատրություն, հոմանիշային շարքերի կազմում:</p>		<p>Մտագրոհ, ընթերցում դադարներով, շղթայաձև ընթերցում, 3 բանալի և մեկ կողպեք, Կրկնակի գրառումների օրագիր</p>	<p>Կարդալ: ՀԱ 13,14 (էջ 84): Հատված անգիր: Դուրս գրել հետաքրքիր մտքերը:</p>
26	8	<p><u>Արձակ պոեմի գաղափարական բովանդակությունը</u></p> <p>1. Տեղեկություններ Մաադիի կյանքի ու ստեղծագործության մասին:</p> <p>2. Բանաստեղծությունների ընթերցում նրա «Գուլեստան ժողովածուից»:</p> <p>3. Մասերից յուրաքանչյուրի բովանդակության վերաշարդրում:</p> <p>4. ՀԱ 3-12, 18, 19 (էջ 83-85):</p> <p>5. Պարսիկ բանաստեղծի կերպարը. աշխարհի մասին նրա պատկերացումները, տենչանքներն ու երազանքները, անսահման կենսասիրությունը:</p>	<p>Ստեղծագործության սյուժեի վերաշարդրում, գրական երկի վերլուծություն, գրական հերոսի կերպարի վերլուծություն:</p>		<p>Համատեղ որոնում (ի±նչն էուշադրությունը գրավել, ի±նչն էլավ տպավորվել, ինչու±), Կրկնակի գրառումների օրագիր</p>	<p>Շարադրություն՝ «Մաադիի կերպարը» խորագրով:</p>

1	2	3	4	5	6	7	8
---	---	---	---	---	---	---	---

27	9		<u>Գեղարվեստական արժանիքները</u> 1. Շարադրությունների ընթերցում, քննարկում և գնահատում: 2. Ստեղծագործության լեզվաոճական առանձնահատկությունները. շրջադասություն . ՀԱ 1,2 (էջ 85):	Բնագրային աշխատանք. - աշխատանք գեղարվեստական արտահայտչամիջոցները տարբերակելու շուրջ:	Հայոց լեզու	Հեղինակի աթոռ, խմբային աշխատանք	ՀԱ 3,5 (էջ 85):
28	10		<u>Արտադասարանական ընթերցանություն. Իսահակյանի «Լիլիթ» պատմվածքը</u>	Արտահայտիչ ընթերցանություն, սեփական կարծիք կազմելու կարողության զարգացում:	Հրեական առասպելներ	Հարցուպատասխան, քննարկում	Կրկնել Թումանյան, Իսահակյան
29	11		Թեստային աշխատանք				
ՇԻՐՎԱՆՁԱԴԵ (9 ԺԱՄ)							
30	1		<u>Շիրվանզադե. «Արտիստը» պատմվածքը</u> 1. Շիրվանզադեի կյանքն ու ստեղծագործությունը: 2. Պատմվածք: Ժանրային առանձնահատկություններ: 3. Պատմվածքը գրելու շարժառիթը: 4. Պատմվածքի ընթերցում:	Շիրվանզադեի դիմակարր, ասույթներ նրա մասին: Գրողի կենսագրության ուսումնասիրություն, նրա ստեղծագործությունների իմացություն: Շիրվանզադեն ժամանակակիցների հուշերում:	Պատմվածք Դեմիրճյան, «Ավելորդը», Սենկևիչ, «Երաժիշտ Յանկոն» Ռոլան, «Դաշնամուրի առաջ»	Ընթերցում դադարներով, կանխագուշակությունների աղյուսակ	Կարդալ: Պատրաստել հետաքրքիր հարցեր: ՀԱ 16 (էջ 121): Շարունակել աղյուսակի «Ի՜նչ եղավ» բաժինը:
31	2		<u>Լևոնի երագանքներն ու իրականությունը</u> 1. Պատմվածքի թեման: 2. Գեղեցիկը պաշտոդ պատանու իդեալները: 3. Կյանքի անբարեհաջող պայմանները: 4. Հայ մարդու ճակատագիրը. ՀԱ 6 (էջ 120): 5. Ընտրովի հատվածների ընթերցում և մեկնաբանություն: 6. Պատմվածքի բաժանում հատվածների և դրանց վերնագրում: 7. Բառային աշխատանք:	Գրական երկը ընթերցելու, դրա հիմնական միտքը ընկալելու կարողության զարգացում: Երկը մասերի բաժանելու և դրանք վերնագրելու կարողության զարգացում:	Պատմություն	Ընթերցում մեկնաբանություններով, հարցուպատասխան Բազմանիստ (արտիստ):	Պատմել: Կազմել նախադասություններ բաճկոն, ասրյա, ատաղձագործ, վտիտ, խպորշում, պատրվակ, տվայտանք բառերով:

1	2	3	4	5	6	7	8
32	3		<u>Պատմվածքի սյուժեն և գաղափարական</u>	Երկի բովանդակության	Երաժշտություն	Համատեղ որո-	Հնգյակ (արտիստ):

		<p><u>բովանդակությունը</u></p> <p>1. Մյուժեն: Նրա բաղկացուցիչները՝ նախադրություն, հանգույց, գործողության զարգացում, գագաթնակետ, լուծում:</p> <p>2. Իդեալի և իրականության հակադրությունը:</p> <p>3. Գեղեցիկը և ողբերգականը պատմվածքում:</p> <p>4. Աշակերտների տպավորությունը, առաջացած մտքերը, զգացմունքները:</p> <p>5. Հեղինակի տեսակետը (ու՞մ է համակրում հեղինակը): ՀԱ 15 (էջ 120):</p>	<p>իմացություն և գործողությունների զարգացման ընթացքը վերարտադրելու կարողության զարգացում: Որոշ հատվածների մանրամասն և համառոտ պատում:</p>	Արվեստ	<p>նում, 3 բանալի և մեկ կողպեք, մեկնողական և դատողական պատում, Հեղինակի աթոռ</p>	Դուրս գրել Լևոնին բնութագրող հատվածները:
33	4	<p><u>Լևոնի կերպարը</u></p> <p>1. Վերնագրային խոր ընդհանրացում:</p> <p>2. Լևոնի սերը թատրոնի և երաժշտության նկատմամբ: Լևոնի հոր ճակատագիրը:</p> <p>3. Լևոնի հոգեբանական ցնցող դրաման: Խորտակված երազանքը:</p> <p>4. Հերոսի մտքերը, զգացմունքները, արարքները, վերաբերմունքը ուրիշների նկատմամբ (համատեղ որոնում):</p> <p>5. Մյուս գործող անձանց վերաբերմունքը Լևոնի նկատմամբ:</p>	Գլխավոր հերոսի հոգեբանական դիմանկարի ստեղծում, մեկնաբանություն: ՀԱ 3-13, 17 (էջ 120-121):		<p>Հարցազրույց հերոսի հետ, համատեղ որոնում, Քառաբաժան</p>	Հարցազրույցի հիման վրա ակնարկ գրել Լևոնի մասին:
34	5	<p><u>Պատմվածքի մյուս կերպարները</u></p> <p>1. Լևոնի մասին գրած ակնարկների ընթերցում և գնահատում:</p> <p>1. Պատկերասրահի կազմում:</p> <p>2. Հեղինակը և իր հերոսները:</p>	Կերպարների բնավորության բացահայտում, նրանց գործողությունների, հոգեբանական շարժառիթների ընկալում և մեկնաբանություն:		<p>Համատեղ որոնում Հեղինակի աթոռ</p>	Բնութագրել գործող անձանցից որևէ մեկին:
35	6	<p><u>Պատմվածքի գեղարվեստական արժանիքները</u></p> <p>1. Շարադրությունների ընթերցում և գնահատում:</p> <p>1. Պատմվածքի լեզվաոճական առանձնահատկությունները. հեղինակի և հերոսների խոսքը:</p> <p>2. Գեղարվեստական պատկերներ՝ բնանկար, միջավայր, կահավորանք (ինտերիեր):</p> <p>3. Բարբառային ձևերը պատմվածքում:</p> <p>4. Բեմագիր ստեղծելու փորձ</p>	Բնագրային աշխատանք՝ հեղինակի և հերոսների խոսքի յուրահատկությունների վերլուծություն: Բեմագրի ստեղծում: ՀԱ 14, 19 (էջ 120-121):		<p>Խմբային աշխատանք Հեղինակի աթոռ</p>	Գրել որևէ հատվածի բեմագիր:

1	2	3	4	5	6	7	8
36	7		<u>Քննարկում. «Արտիստը» պատմվածքը</u> 1. Տաղանդավոր անհատը և հասարակությունը: 2. Խնդրի արդիականացում. տաղանդավոր արվեստագետներն այսօր աշխարհում: 3. Նոր ավարտ պատմվածքի համար:	Երկի մասին սեփական կարծիք կազմելու կարողության զարգացում: Ստեղծագործական աշխատանք. սովորած բառերի կիրառություն սեփական խոսքում:		Կլոր սեղան	Պատմվածքի մասին սեփական կարծիքի հակիրճ շարադրանք:
37	8		<u>Արտադասարանական ընթերցանություն. Շիրվանզադեի «Պատվի համար» դրաման</u> 1. Ի՞նչ է պատիվը: 2. Դրամա:	Դրամայի քննարկում սեփական կարծիք կազմելու, զրույց, քննարկում վարելու, ելույթ ունենալու կարողությունների զարգացում: Կինոկարի դիտում:	Պատմություն	Քննարկում	Կարդալ, ներկայացնել
38	9		Թեստային աշխատանք				
ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆ (9 ԺԱՄ)							
39	1		<u>Վ. Տերյան. «Տխրություն» բանաստեղծությունը</u> 1. Տերյանի կյանքն ու ստեղծագործությունը: 2. «Մթնշաղի անուրջներ » ժողովածուն: Քաղցր ցնորքների զիրքը: 3. Բանաստեղծության ընթերցում: 4. Վերնագրի մեկնաբանություն: 5. Բանաստեղծի լուսավոր թախիծը: 6. <i>Գունատ աղջիկ</i> խորհրդանիշը: 7. Տխուր ապրումի և տխուր բնական կարի զուգահեռը: 8. Պատկերավորման համակարգը՝ հանգ, մակդիր, փոխաբերություն, համեմատություն: Տաղաչափություն. հանգավորում: 9. Տրիոլետ: Տերյանի տրիոլետների ընթերցում:	Տերյանի դիմանկարը, ասույթներ Տերյանի մասին: Բանաստեղծի կյանքի և ստեղծագործությունների իմացություն: Տերյանը ժամանակակիցների հուշերում: Քնարական բանաստեղծության վերլուծություն:	Կրկն.-Բանաստեղծական շարք Երաժշտություն - Ռ.Մելիքյանի <<Աշնան տաղեր>> երգաշարը, Ա.Տեր-Ղևոնդյան <<Նորից անձրև, մշուշ, ամպ>>	Քառաբաժան Բազմանիստ Հնգյակ Խմբային աշխատանք Պատկերասրահ	Կյանքը, ստեղծագործությունը: Բանաստեղծությունը սովորել անգիր: Կազմել թեմատիկ բառաշարք:

1	2	3	4	5	6	7	8
40	2		<u>Գագեյ: Տերյանի «Հրաժեշտի գագեյը»</u>	Բանաստեղծական կա-		Քառաբաժան	Անգիր:

			<p>1. Գազելը որպես բանաստեղծության տեսակ:</p> <p>2. Բանաստեղծության ընթերցում:</p> <p>3. Անցած կյանքի հուզիչ հանրագումարը: «Անչար հոգու» խաղաղ և լուսավոր հայացքը: Մարդկանց հիշողության մեջ անմահանալու հույսը:</p> <p>4. Հակադիր տրամադրությունների արտահայտման ձևը բանաստեղծության մեջ:</p>	<p>յուն ձևերի իմացություն, դրանց տարբերակման կարողության զարգացում: Բանաստեղծության ձևի և բովանդակության միասնության ընկալում:</p>		<p>Քարտեզագրում (բանաստեղծության տեսակներ)</p>	
41	3		<p><u>Բանաստեղծության գեղարվեստական արժանիքները</u></p> <p>1. ՀԱ 5-7 (էջ128):</p> <p>2. Պատկերավորման համակարգը:</p>	<p>Պատկերավորման միջոցները տարբերակելու կարողության զարգացում:</p>		<p>Խմբային աշխատանք</p>	<p>Տ-աձև աղյուսակով դուրս գրել մակդիրներն ու որոշիչները:</p>
42	4		<p><u>Տեքստի «Երկիր Նաիրի» շարքը: «Որպես Լաերտի որդին, որպես...» բանաստեղծությունը</u></p> <p>1. Շարքի հիմնական մոտիվը: Դրա տարբեր դրսևորումները: 7-8,12-րդ բան.:ՀԱ 2-4 (էջ137):</p> <p>2. Ուրույն փիլիսոփայություն Հայաստանի հոգևոր հարստության, անցյալի, ներկայի, գալիքի մասին:</p> <p>3. Բանաստեղծության ընթերցում:</p> <p>4. Ողիսւսը և հայ բանաստեղծը:</p> <p>5. Հեռավոր հայրենիքի կարոտը:</p> <p>6. Պատկերավորման համակարգը:</p>	<p>Քնարական բանաստեղծության վերլուծություն, կառուցվածքային և լեզվաոճական առանձնահատկությունների ըմբռնում:</p>	<p>Բանաստեղծական շարք</p> <p>Պատմություն</p> <p>Հումերոս,</p> <p><Ողիսական>></p>	<p>Քառաբաժան Հնգյակ</p> <p>Պատկերասրահ</p>	<p>Անգիր: Դուրս գրել մակդիրները, փոխաբերությունները, համեմատությունները:</p>
43	5		<p><u>Սոնետ: <<Իջնում է գիշերն անգութ ու մթին>> «Հայրենիքում իմ արնաներկ» բանաստեղծությունները</u></p> <p>1. Սոնետի ` որպես բանաստեղծական կայուն ձևի առանձնահատկությունները:</p> <p>2. Դարավոր մաքառումները և հայի ամրակուռ հոգին: Վիրավոր, անարգված հոգու պատկերը:</p> <p>3. Ապրելու, ստեղծագործելու և արիության խորհուրդը:</p> <p>4. Բառային աշխատանք:</p> <p>5. Պատկերավորման համակարգը:</p>	<p>Քնարական բանաստեղծության վերլուծություն, կառուցվածքային և լեզվաոճական առանձնահատկությունների ըմբռնում:</p>		<p>Քառաբաժան</p> <p>Պատկերասրահ</p>	<p>Անգիր որևէ մեկը: Դուրս գրել պատկերավորման միջոցները: Կազմել թեմատիկ բառաշարք:</p>

1	2	3	4	5	6	7	8
---	---	---	---	---	---	---	---

44	6	<p>«Դու հպարտ չես, իմ հայրենիք» և «Մշուշի միջից-տեսի՝ լ դյուխական» բանաստեղծությունները</p> <p>1. Անհուն սերը հայրենիքի նկատմամբ:</p> <p>2. Հայրենիքի բանաստեղծական պատկերը:</p> <p>2. Պատկերային համակարգը:</p>	Քնարական բանաստեղծության վերլուծություն: Տերյանի տաղաչափության ուսումնասիրություն:		Քառաբաժան	Անգիր որևէ մեկը: Դուրս գրել պատկերավորման միջոցները: ՀԱ 9 (էջ 137):
45	7	<p>«Վյաչեսլավ Իվանովին» բանաստեղծությունը</p> <p>1. Գաղափար ակրոստիքոսի մասին:</p> <p>2. Բանաստեղծության վերլուծություն:</p> <p>3. Բաղաձայնային և առձայնային:</p>	Քնարական բանաստեղծության վերլուծություն: Տերյանի տաղաչափության ուսումնասիրություն:		Քառաբաժան Հնգյակ, Բազմանիստ (Նաիրի):	Ակրոստիքոս գրելու փորձ:
46	8	<p>«Մի՛թե վերջին պոետն եմ ես» բանաստեղծությունը</p> <p>1. Մտածող, տառապող հայի հոգեկան խռովքը:</p> <p>2. Պատկերային համակարգը:</p>	Կազմած թեմատիկ բառաշարքերի համակարգում, փոքրիկ շարադրություն՝ «Տերյանի Նաիրի երկիրը. անցյալը, ներկան, ապագան»:		Քառաբաժան	Անգիր: «Երկիր Նաիրի» շարքից դուրս գրել ճարտասանական հարցերն ու բացականչությունները, առձայնային և բաղաձայնային օրինակները:
47	9	<p>Պոեզիայի ժամ</p> <p>Տերյանի այլ բանաստեղծությունների ընթերցում և մեկնաբանություն:</p>	Ծանոթություն բանաստեղծի ստեղծագործությանը, ասմունք, սեփական կարծիք հայտնելու կարողությունների զարգացում:			Անգիր սովորել որևէ բանաստեղծություն:
48		Գրավոր				
49		Գրավոր				
50		Գրավոր				
51		Գրավոր				

II ԿԻՍԱՄՅԱԿ

1	2	3	4	5	6	7	8
---	---	---	---	---	---	---	---

ՆԱՐ – ԴՈՍ (9 ԺԱՄ)							
52	1		<p><u>Նար-Դոս. «Նեղ օրերից մեկը» պատմվածքը</u></p> <p>1. Նար-Դոսի կյանքն ու ստեղծագործությունը:</p> <p>2. «Նեղ օրերից մեկը» պատմվածքը (1904թ.):</p> <p>3. Բառային աշխատանք:</p>	Նար-Դոսի դիմանկարը, ասույթներ նրա մասին: Գրողի կենսագրության ուսումնասիրություն, նրա ստեղծագործությունների իմացություն: Նար-Դոսը ժամանակակիցների հուշերում:	Պատմվածք Շիրվանզադե, «Արտիստը»	Ընթերցում դադարներով, կանխագուշակությունների աղյուսակ	Կյանքը, ստեղծագործությունների ցանկ: Կարդալ: Շարունակել աղյուսակի «Ինչ եղավ» բաժինը:
53	2		<p><u>Հայ մտավորականի կյանքի մեկ օրը</u></p> <p>1. Պատմվածքի խորագրի խորհրդանշական իմաստը:</p> <p>2. Հոգևոր արժեքների անկումը:</p> <p>3. Հայ մտավորականը և իրականությունը. հակադրությունների դերը պատմվածքում:</p> <p>4. Հայ մամուլի վիճակը:</p> <p>5. Պատմվածքի ավարտը. ինչու՞ հեղինակը ընդհանրացնող պատկերով չի ավարտում պատմվածքը:</p> <p>6. ՀԱ 1-13, 21, 22, 23 (էջ 158-160):</p> <p>7. Նար-Դոսի «Վերջին մոհիկանները». հերոսների ճակատագիրը:</p>	Երկի բովանդակության իմացություն և գործողությունների զարգացման ընթացքը վերարտադրելու կարողության զարգացում: Որոշ հատվածների մանրամասն և համառոտ պատում: Երկը մասերի բաժանելու և դրանք վերնագրելու կարողության զարգացում:		3 բանալի և մեկ կողպեք, մեկնողական և դատողական պատում Թառաբաժան	Նոր սկիզբ, միջնամաս ու ավարտ գրել պատմվածքի համար:
54	3		<p><u>Պատմվածքի կերպարները</u></p> <p>1. Կերպարների հոգեբանության ու հասարակական վիճակի ներքին կապը:</p> <p>2. Շրջապատից մերժված անհատը: Արտաքինը, պահվածքը: Նրա ներաշխարհը, ապրումները:</p> <p>3. Շարքային մտավորականի ընդհանրացված պատկերումը:</p> <p>4. ՀԱ 14, 15, 18-20 (էջ 159-160):</p> <p>5. Հեղինակի վերաբերմունքը իր հերոսների նկատմամբ:</p>	Գլխավոր հերոսի հոգեբանական դիմանկարի ստեղծում, մեկնաբանություն: Կերպարների բնավորության բացահայտում, նրանց գործողությունների, հոգեբանական շարժառիթների ընկալում և մեկնաբանություն:		T-աձև աղյուսակ, խմբային աշխատանք, գրավոր կամ բանավոր հարցազրույց հերոսների հետ	Կազմել պատկերասրահ:

1	2	3	4	5	6	7	8
55	4		<p><u>Պատմվածքի գեղարվեստական արժանիքները</u></p> <p>1. Պատմվածքի լեզուն և ոճը:</p>	Բնագրային աշխատանք՝ հեղինակի և հե-		Խմբային աշխատանք	ՀԱ 17 (էջ 160):

			2. Հումորը և երգիծանքը պատմվածքում: 3. Անկարևոր թվացող մանրամասների դերը պատմվածքում: 4. Լեզվական առաջադրանքի կատարում (էջ 161)	րոսների խոսքի յուրահատկությունների վերլուծություն: Բեմագրի ստեղծում:			
56	5		<u>Նար-Ռոսի «Ես և նա» պատմվածքը</u> 1. Պատմվածքի ընթերցում: 2. Հեղինակը, Եսը և իտալական սիրավեպի անհայտ հեղինակը: Նրանց վերաբերմունքը պատմվող իրադարձությունների նկատմամբ: 3. Բառային աշխատանք:	Արտահայտիչ ընթերցանություն: Գրական երկը ընթերցելու, դրա հիմնական միտքը ընկալելու կարողության զարգացում:		Ընթերցում դարձնելով, կանխագուշակությունների աղյուսակ	Կարդալ: ՀԱ 23, 24 (վերնագրել հատվածները) (էջ 177):
57	6		<u>Պատմվածքի սյուժեն և գաղափարական բովանդակությունը. քննարկում</u> 1. Պատմվածքի կառուցվածքը: 2. Սյուժեն, գաղափարը: 3. ՀԱ 1-22 (էջ 176-177): 4. Ստեղծագործական աշխատանք. պատմվածքի մասերի ինքնատիպ ավարտների շարադրանք:	Երկի բովանդակության իմացություն և գործողությունների զարգացման ընթացքը վերարտադրելու կարողության զարգացում: Որոշ հատվածների մեկնողական և դատողական պատում:		3 բանալի և մեկ կողպեք, Կրկնակի գրառումների օրագիր Քառաբաժան մեկնողական և դատողական պատում	Կազմել պատկերասրահ:
58	7		<u>Պատմվածքի կերպարները</u> 1. ՀԱ 25-32 (էջ 177-178): 2. Հոգեբանական վերլուծությունները:	Կերպարների բնավորության բացահայտում, նրանց գործողությունների, հոգեբանական շարժառիթների ընկալում և մեկնաբանություն: Գործող անձանց մասին վերլուծական, համեմատական շարադրանք:		Անհատական տեքստի ստեղծում, հարցազրույց հերոսի հետ, համատեղ որոնում, Քառաբաժան	Գրավոր հարցազրույց հերոսներից մեկի հետ:
59	8		<u>Պատմվածքի գեղարվեստական արժանիքները</u> 1. Ինքնատիպ կառուցվածքը: 2. Պատմելաձևերի տարբերությունները: 3. Հեղինակի հարուստ լեզուն, պատկերավոր արտահայտությունները: 4. Երկխոսությունների կերտման վարպետությունը:	Արտահայտչամիջոցները գտնելու և տարբերակելու կարողության զարգացում: Պատկերավոր արտահայտությունների դուրսգրում և աղյուսակների կազմում:		Դ-աձև աղյուսակ, խմբային աշխատանք	Լեզվական առաջադրանք 1,2 (էջ 179):

1	2	3	4	5	6	7	8
60	9		<u>Արտադասարանական ընթերցանություն.</u>	Վեպի քննարկում, սեփա-		Զրույց, ելույթ	Կարդալ:

			<u>Նար-Դոսի «Մպանված աղավնի» վեպը</u>	կան կարծիք կազմելու, գրույց, քննարկում վարելու, էլույթ ունենալու կարողությունների զարգացում:			Ներկայացնել:
			ՄԻՍԱՔ ՄԵԾԱՐԵՆՑ (9 ԺԱՄ)				
61	1		<u>Մ. Մեծարենց. «Սիրերգ» բանաստեղծությունը</u> 1. Մեծարենցի կյանքն ու ստեղծագործությունը: 2. «Նավակները» բանաստեղծության ընթերցում և մեկնաբանություն: 3. Մեծարենցի գիշերերգության հմայքը (էջ 187): 4. Բանաստեղծության ընթերցում: 5. Բառային աշխատանք: 4. Գիշերն իբրև չքնաղ երագ. բնանկարը: 5. Բանաստեղծի դրաման, նրա հոգեվիճակը, տառապանքը և ափսոսանքի զգացումը. հակադիր ապրումները: 6. ՀԱ 1-9 (էջ 187):	Մեծարենցի դիմանկարը, Չարենցը Մեծարենցի մասին: Բանաստեղծի կյանքի և ստեղծագործությունների իմացություն: Մեծարենցը ժամանակակիցների հուշերում: Արևմտահայերեն երկերը հասկանալու, դրանց լեզվական արտահայտչական առանձնահատկությունները ընկալելու կարողություն:		Ելույթ, ռեֆերատ Քառաբաժան Բազմանիստ	Կյանքը, ստեղծագործությունը ներկայացնել: Կարդալ
62	2		<u>Բանաստեղծության գեղարվեստական արժանիքները</u> 1. Մեծարենցի բանաստեղծական լեզուն: 2. Հովվերգական բնանկարը և բանաստեղծի դրամատիկ ապրումները: Հակադրության արտահայտչականությունը: 3. Մակդիր, փոխաբերություն,	Չափածոյի կառուցվածքային և լեզվաոճական առանձնահատկությունների ըմբռնում:		Խմբային աշխատանք	Անգիր: : ՀԱ 10 (էջ 187):
63	3		<u>Մ. Մեծարենցի «Չմրան պարզ գիշեր» բանաստեղծությունը</u> 1. Ինչպես ընթերցել «Չմրան պարզ գիշեր»-ը (էջ 190): 2. Բանաստեղծության ընթերցում: 3. Բառային աշխատանք: 4. Բնության ներդաշնակ կյանքին ձուլվելու ձգտումը բանաստեղծության մեջ: 5. Գիշերվա գունազեղ բանաստեղծական պատկերները:	Արևմտահայերեն երկերը հասկանալու, դրանց լեզվական արտահայտչական առանձնահատկությունները ընկալելու կարողության զարգացում: ՀԱ 9 (էջ 191): ՀԱ 1-8, 11,12 (էջ 191):		Քառաբաժան Բազմանիստ Հնգյակ Օգնական աշակերտ Պատկերասրահ	Կարդալ: Արձակ վերաշարադրել բանաստեղծությունը արևելահայերեն:

1	2	3	4	5	6	7	8
---	---	---	---	---	---	---	---

64	4		<u>Բանաստեղծության գեղարվեստական արժանիքները</u> 1. Պատկերային համակարգը:	Խոսքի գեղարվեստական արտահայտչամիջոցները սեփական խոսքում կիրառելու կարողության զարգացում:		Խմբային աշխատանք, անհատական տեքստի ստեղծում	Անգիր: ՀԱ 13 (էջ 192):
65	5		<u>Մ. Մեծարենցի «Արասիաներու շուրին տակ» բանաստեղծությունը</u> 1. Սոնետ: Առանձնահատկությունները: 2. Բանաստեղծության ընթերցում: 3. Բառային աշխատանք: 4. Թեման: Բանաստեղծն ու բնությունը: 5. Անկենդան իրերի շնչավորումը որպես մարդու և բնության հոգեկան կապի արտահայտություն: 6. Բնապատկերի կենդանի շարժումը: 7. ՀԱ 1-6,8 (էջ 194):	Քնարական բանաստեղծության վերլուծություն: Թեմատիկ բառաշարքի կազմում:		Քառաբաժան Պատկերասրահ	Կարդալ: ՀԱ 7 (էջ 194):
66	6		<u>Բանաստեղծության գեղարվեստական արժանիքները</u> 1. Բանաստեղծության կառուցվածքը: 2. Ընդհանուր բնապատկեր և միկրոպատկերներ (ծաղիկներ, բուրումներով օձուն հովիկ, ձյունե ծաղիկ, դյուխական հուրի կաթե գուռ և այլն): 3. Լեզվաոճական վերլուծություն. Մեծարենցի բանաստեղծական լեզուն: 4. Պատկերային համակարգը. մակդիր, համեմատություն, փոխաբերություն, չափազանցություն, շրջադասություն, անձնավորում:	Պատկերավորման միջոցները տարբերակելու և սեփական խոսքում օգտագործելու կարողության զարգացում: ՀԱ 9 (էջ 194):		Փոքրիկ շարադրություն Պատկերասրահ	Անգիր:
67	7		<u>Մ. Մեծարենցի «Հյուղը» բանաստեղծությունը</u> 1. Մարդասիրության մասին (էջ 195): 2. Բանաստեղծության ընթերցում: 3. Բառային աշխատանք: 4. Բարության, մարդասիրության, մարդկանց անմնացորդ նվիրվելու բարոյական արժեքների փառաբանությունը: 5. ՀԱ 1-8 (էջ 198):	Քնարական բանաստեղծության վերլուծություն ՀԱ 9 (էջ 198):		Քառաբաժան Պատկերասրահ Բազմանիստ Հնգյակ	Հնգյակ: Կարդալ: ՀԱ 10 (էջ 198):

1	2	3	4	5	6	7	8
68	8		<u>Բանաստեղծության գեղարվեստական արժանիքները</u>	Պատկերավորման մի-		Խմբային	Անգիր:

		<u>նիքները</u> 1. Պատկերային համակարգը:	ջոցները տարբերակելու և սեփական խոսքում օգտագործելու կարողության զարգացում:		աշխատանք	
69	9	Պոեզիայի ժամ 1. Բանաստեղծությունների ընթերցում և մեկնաբանություն: 2. «Տու՝ր ինձի, Տե՝ր » բանաստեղծությունը:	Ծանոթություն բանաստեղծի ստեղծագործությանը, ասմունք, սեփական կարծիք հայտնելու կարողությունների զարգացում		Խմբային աշխատանք	
70		Թեստային աշխատանք				
71		<u>Արտադասարանական ընթերցանություն.</u> <u>Գի դը Մոպասանի նորավեպերից ...</u>	Նովելների ընթերցում, սեփական կարծիք կազմելու, գրույց, քննարկում վարելու, էլույթ ունենալու կարողությունների զարգացում:		Անհատական և խմբային աշխատանք	Կարդալ մի քանի նորավեպ:
ԳՐԻԳՈՐ ԶՈՀՐԱՊ (6 ԺԱՄ)						
72	1	<u>Գ. Զոհրապ. «Այրին» նովելը</u> 1. Նորավեպի իշխանը: 2. Հասկացողություն նորավեպի մասին: 3. Նորավեպի հայ և այլազգի վարպետներ: 4. Նորավեպի ընթերցում: 5. Բառային աշխատանք:	Զոհրապի դիմանկարը, ասույթներ նրա մասին: Գրողի կենսագրության ուսումնասիրություն, նրա ստեղծագործությունների իմացություն: Զոհրապը ժամանակակիցների հուշերում: Նորավեպին հատուկ կողմերի բացահայտում և վերլուծություն:	Զեյթունցյան, «Վերջին արևագալը» Պատմություն-1915	Ընթերցում դադարներով, կանխագուշակությունների աղյուսակ, քարտեզագրում	Կարդալ:
73	2	<u>Պանդխտության չարիքի պատկերումը նորավեպում</u> 1. Նորավեպի ընթերցում: 2. Հատվածների մեկնաբանություն: Ցույց տալ դեպքերի, գործողությունների զարգացման արագ ընթացքը և հանկարծակի անսպասելի ավարտը: 3. Հատվածների թարգմանություն:	Արևմտահայերեն երկերը հասկանալու, դրանց լեզվական արտահայտչական առանձնահատկությունները ընկալելու կարողության զարգացում:	Պատմություն	Ընթերցում դադարներով, կանխագուշակությունների աղյուսակ Խմբային աշխատանք	Պատմել: ՀԱ 23 (էջ 220):

1	2	3	4	5	6	7	8
74	3		<p><u>Նորավեպի սյուժեն և գաղափարական բովանդակությունը</u></p> <p>1. Սյուժեն: Գաղափարը:</p> <p>2. Նորավեպի կառուցվածքը:</p> <p>3. Վերնագիրը:</p> <p>4. Նորավեպի գլուխներից յուրաքանչյուրի մանրամասն վերաշարադրանք՝ բնագրի բառերի և արտահայտությունների օգտագործմամբ:</p> <p>5. Որոշակի մանրամասներ ավելացնելով՝ նորավեպի ավարտը դարձնել ավելի կանխատեսելի:</p> <p>5. ՀԱ 1-18 (էջ 220-221):</p>	Նորավեպի՝ որպես արտասովոր, սրընթաց զարգացող սյուժե և անսպասելի, հանկարծակի, սրամիտ, ինքնատիպ ավարտ ունեցող պատմության ընկալում: Հորինել հանգուցալուծման սեփական տարբերակ:		Համատեղ որոնում, 3 բանալի և մեկ կողպեք, մեկնողական և դատողական պատում, խմբային աշխատանք	Վերականգնել և գրի առնել սյուժետային այն մանրամասներից որևէ մեկը, որը բաց է թողել հեղինակը: ՀԱ 25,26 (էջ 221):
75	4		<p><u>Նորավեպի կերպարները</u></p> <p>1. Մարտիրոսի հոգեբանության աստիճանական փոփոխությունների ընթացքը:</p> <p>2. Խաչո և Մարտիրոս. ճակատագրերի տարբերությունը:</p> <p>3. Ջարդարի կերպարը: Գեղջկուհու աննախանձելի վիճակն ընտանիքում:</p> <p>4. Ջարդար և քաղաքաբնակ կանայք:</p> <p>5. Հեղինակի տեսակետը:</p>	Նորավեպում անհատի անձնական կյանքի և հոգեբանության նրբերանգների բացահայտման կողմի ընկալում:		Հարցազրույց հերոսի հետ, համատեղ որոնում, Քառաբաժան T-աձև աղյուսակ, խմբային աշխատանք	Բնութագրել հերոսներից որևէ մեկին:
76	5		<p><u>Նորավեպի գեղարվեստական և լեզվաոճական առանձնահատկությունները</u></p> <p>1. Չոհրապի պատկերավոր, բայց անզարդ խոսքը: ՀԱ 18 (էջ 220):</p> <p>2. Ճշգրիտ նկարագրությունները. անսպասելի մակդիրներ:</p> <p>3. Լեզվաոճական առաջադրանքների կատարում. 1, 2 (էջ 221-222):</p>	Շարադրության մրցույթ Գրավոր և բանավոր խոսքի զարգացում Աշխատանք պատկերավորման միջոցների տարբերակման շուրջ:		Հեղինակի աթոռ, քննարկում, խմբային աշխատանք	Լեզվաոճական առաջադրանք 3 (էջ 222):
77	6		<p><u>Արտադասարանական ընթերցանություն. Օ՛հենրիի նորավեպերը</u></p>	Նովելների ընթերցում, սեփական կարծիք կազմելու, զրույց, քննարկում վարելու, ելույթ ունենալու կարողությունների զարգացում:		Անհատական և խմբային աշխատանք	Կարդալ, ներկայացնել:

1	2	3	4	5	6	7	8
---	---	---	---	---	---	---	---

78			<p><u>Նորավեպ, պատմվածք, վիպակ, համեմատական վերլուծություն</u></p> <p>1. համեմատական վերլուծությամբ և օրինակների նշումով նորավեպի, պատմվածքի, վիպակի տարբերակում:</p> <p>2.«Արտիստը», «Նեղ օրերից մեկը», «Ես և նա», «Սպիտակ ձին», «Ավելորդը», «Մամ փրե արքան», «Ոսկե կիրճը» պատմվածքները:</p> <p>3. «Առաքյալը» վիպակը:</p> <p>4.Մոպասանի, Չեխովի, Օ'Հենրիի նորավեպերը:</p> <p>5. Նորավեպի համար դիպաշարերի առաջադրում:</p>	Արձակի տարբեր ժանրերի առանձնահատկությունների տարբերակում: Հետազոտական աշխատանք:	Շիրվանզադե Նար-Դոս Բակունց Դեմիրճյան Գալշոյան Լոնդոն Մուրացան	Խմբային հետազոտություն, քարտեզագրում	Նորավեպ գրելու փորձ՝ ըստ առաջադրված նյութի:
79			<u>Գրական փորձեր, նորավեպի մրցույթ</u> Լավագույն նորավեպերի ընտրություն	Աշակերտների հեղինակած նորավեպերի ընթերցում, դրանց քննարկում		Հեղինակի աթոռ	Պատրաստվել թեստային աշխատանքի:
81			<u>Թեստային աշխատանք</u>				
			ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆ (6 ԺԱՄ)				
82	1		<p><u>Վարուժանի «Չոն» բանաստեղծությունը</u></p> <p>1.Վարուժանի կյանքն ու ստեղծագործությունը:</p> <p>2. «Ցեղին սիրտը» ժողովածուն:</p> <p>3. Բանաստեղծության ընթերցում:</p> <p>4. Բառային աշխատանք:</p> <p>5. Հայ ժողովրդի պատմական ճակատագրի արտացոլումը: Հայրենիքի փառավոր պատմության, ողբերգական ներկայի խորհրդանշական պատկերները, ազատության պայքարի կոչը:</p> <p>6. Բանաստեղծության կառուցվածքը (էջ 230-231):</p> <p>7.Վեցնյակների ուրույն իմաստը:</p> <p>8. Եղեգան փողի պատկերը և նրա արտահայտչականությունը:</p> <p>9. Հարցեր 1-9 (էջ 229-230):</p>	Վարուժանի դիմանկարը, ասույթներ նրա մասին: Բանաստեղծի կյանքի և ստեղծագործությունների իմացություն: Վարուժանը ժամանակակիցների հուշերում: Քնարական բանաստեղծության վերլուծություն:	Պատմություն-1915 Երաժշտ.- Հարո Ստեփանյանի ստեղծ.՝ գրված Վարուժանի բանաստեղծությունների հիման վրա: Խորենացի, «Վահագն» առասպելը	Քառաբաժան Բանալի բառեր	Կյանքի ժամանակագրական աղյուսակ: Վերնագրել տները, յուրաքանչյուր տնից դուրս գրել բանալի բառերը: (Առաջադրանքներ 1-3, էջ 232):
1	2	3	4	5	6	7	8
83	2		<u>Բանաստեղծության գեղարվեստական</u>	Չափաձոյի կառուցվածքա-	Ոճավորում	Խմբային	Անգիր:

		<p><u>արժանիքները</u></p> <p>1. Բանաստեղծության կառուցվածքային առանձնահատկությունները:</p> <p>2. Ոճավորում. «Վահագն» առասպելը. առաջադրանք 5 (էջ 232):</p> <p>3. Կրկնությունների դերը. առաջադրանք 4 (էջ 232):</p>	<p>յին և լեզվաոճական առանձնահատկությունների ըմբռնում:</p>		<p>աշխատանք</p>	<p>Առաջադրանք 7 (էջ 233):</p>
84	3	<p><u>Վարուժանի «Ցորյանի ծովեր» քանաստեղծությունը</u></p> <p>1. «Հացին երգը» ժողովածուն: Գյուղաշխարհի կյանքի և ստեղծագործ աշխատանքի հովվերգական պատկերը: Ժողովածուի բովանդակությունը: Բանաստեղծությունների ընթերցում:</p> <p>2. «Ցորյանի ծովեր» քանաստեղծ. ընթերցում:</p> <p>3. Բառային աշխատանք:</p> <p>4. «Հովեր կանցնին» նկարչական պատկերը և նրա հետզհետե բացվող ենթատեքստը:</p> <p>5. Իր աշխատանքի արդյունքով հիացող գյուղացու թաքնված պատկերը:</p> <p>6. Ցորենի արտի շնչավորված պատկերը. կենդանի կյանքի թրթիռի հասկերի յուրաքանչյուր շարժման մեջ:</p> <p>7. ՀԱ 1-7 (էջ 235-236):</p>	<p>Արևմտահայ գրականության նմուշների լեզվական արտահայտչական առանձնահատկություններն ընկալելու կարողության զարգացում: Տեքստի կազմում բանալի բառերով, համեմատություն Վարուժանի քանաստեղծության հետ:</p>		<p>Բանալի բառեր Բազմանիստ Հնգյակ Քառաբաժան</p>	<p>Կարդալ: Բառային աշխատանք 1,4 (էջ 234):</p>
85	4	<p><u>Բանաստեղծության գեղարվեստական արժանիքները</u></p> <p>1. Բանաստեղծության կառուցվածքը. տների կառուցվածքային յուրահատկությունները:</p> <p>2. Բնանկարը քանաստեղծության մեջ:</p> <p>3. «Հովեր կանցնին», «Ծովեր կանցնին» կրկնակները: ՀԱ 9, 10 (էջ 235):</p> <p>4. Բանաստեղծության ակնհայտ երաժշտականությունը. թռչունների և ցորյանի ծովերի երգը:</p> <p>5. Փոխաբերություն, չափազանցություն, համեմատություն, անձնավորում::</p>	<p>Չափածոյի կառուցվածքային և լեզվաոճական առանձնահատկությունների ըմբռնում: Բանաստեղծության թարգմանություն:</p>		<p>Խմբային աշխատանք</p>	<p>Անգիր: Թարգմանել քանաստեղծությունը:</p>

1	2	3	4	5	6	7	8
---	---	---	---	---	---	---	---

86	5	<p><u>Վարուժանի «Կարոտի նամակ» բանաստեղծությունը</u></p> <ol style="list-style-type: none"> 1. Բանաստեղծության ընթերցում: 2. Բառային աշխատանք: 3. Նամականու ձևի օգտագործումը: Նամակ-մենախոսության հուզական մեծ լիցքը: 4. Հայ գեղջկուհու քնարական կերպարը: Պանդուխտ որդուն սպասող, տառապած հայուհու նորաշխարհային հոգեբանության բացահայտումը: 5. Բանաստեղծության կառուցվածքը: 6. Պատկերային համակարգը: 	Քնարական բանաստեղծության վերլուծություն: Քնարական հերոսի հոգեբանական դիմանկարի կերտում:	Զոհրապ, «Այրին» Վարուժան, «Զոն»	Քառաբաժան Բազմանիստ Հնգյակ (պանդուխտ, կարոտ)	Կարդալ: ՀԱ 4 (Էջ 239):
87	6	<p><u>Վարուժանի «Անդաստան» բանաստեղծությունը</u></p> <ol style="list-style-type: none"> 1. Բանաստեղծության ընթերցում և բառային աշխատանք: 2. Բանաստեղծի երգած աշխարհը: 3. Իդեալական աշխարհի մարդու բնութագիրը: 4. Պատկերային համակարգը: 	Քնարական բանաստեղծության վերլուծություն:		Քառաբաժան Բազմանիստ Քարտեզագրում	Անգիր:
88		<u>Թեստային աշխատանք</u>				
89		<u>Արտադասարանական ընթերցանություն. Օ.դր Բալզակի «Հայր Գորիո» վեպը</u>	Մեփական կարծիք կազմելու, զրույց, քննարկում վարելու, ելույթ ունենալու կարողությունների զարգացում:		Քննարկում	Կարդալ, ներկայացնել:
		ԷՌՆԵՍՏ ՀԵՄԻՆԳՈՒԵՅ (6 ԺԱՄ)				
90	1	<p><u>Է.Հեմինգուեյի «Օերունին և ծովը» վիպակը</u></p> <ol style="list-style-type: none"> 1. Հեմինգուեյի կյանքն ու ստեղծագործությունը: 2. Վիպակ: Ժանրային առանձնահատկություններ: 3. Վիպակի ընթերցում: 4. Բառային աշխատանք: 	Գրողի դիմանկարը: Կյանքն ու ստեղծագործությունը: Հեմինգուեյի տեղը համաշխարհային գրականության մեջ: Նորբեյան և Պուլիտցերյան մրցանակների դափնեկիրը:	Կրկն. –Վիպակ Մուրացանի «Առաքյալը» վիպակը Պատմ.- Առաջին համաշխարհային պատերազմ Կենսաբանություն- Շնաձուկ	Ընթերցում դարձնելով, կանխագուշակությունների աղյուսակ	Կարդալ: Շարունակել աղյուսակի «Ի՜նչ եղավ» բաժինը:

1	2	3	4	5	6	7	8
---	---	---	---	---	---	---	---

90	2		<u>Մարդն ու բնությունը</u> 1. Ծերունի ձկնորսի կյանքը. կենցաղն ու փոխհարաբերությունները աշխարհի հետ: 3. Ծերունին և ծովը. անքակտելի կապն ու հակամարտությունը: 4. Ընտրովի հատվածների ընթերցում:	Ընտրովի հատվածների արտահայտիչ ընթերցանություն և մեկնաբանություն:		3 բանալի և մեկ կողպեք, մեկնողական և դատողական պատում Քառաբաժան	Պատմել: Բաժանել հատվածների և վերնագրել:
91	3		<u>Վիպակի սյուժեն ու գաղափարական բովանդակությունը</u> 1. Վիպակի սյուժեի վերարտադրություն (կարդալ ողջ վիպակը): 2. Շնամկների դեմ պայքարի խորհրդանշական իմաստը: 3. Ծերունու անհաջողությունը, որը նրա համար բարոյական հաղթանակի է վերածվում: 4. «Մարդուն կարելի է ոչնչացնել, բայց հաղթելն անկարելի է»:	Երկի բովանդակության իմացություն և գործողությունների զարգացման ընթացքը վերարտադրելու կարողության զարգացում: Որոշ հատվածների մանրամասն և համառոտ պատում: Երկը մասերի բաժանելու և դրանք վերնագրելու կարողության զարգացում:	Գարսիա Մարկես	Խնդրային և անհատական աշխատանք	Պատմել: Դուրս գրել այն խոսքերը, որոնք նա ստում է ձկանը:
92	4		<u>Վիպակի կերպարները</u> 1. Մանտյագոյի արտաքինը, տնակը, կենցաղը: 2. Արարքների հոգեբանական շարժառիթները, շրջապատի ազդեցությունը դրանց վրա: 3. Հավատարիմ աշակերտը. երկու սերունդների ներկայացուցիչների անդավաճան ընկերությունը: 4. Հերոսների զգացմունքները: 5. Հեղինակի տեսակետը:	Կերպարների բնավորության բացահայտում, նրանց գործողությունների, հոգեբանական շարժառիթների ընկալում և մեկնաբանություն: Գործող անձանց մասին վերլուծական, համեմատական շարադրանք:		T-աձև աղյուսակ, համատեղ որոնում	Բնութագրել Մանտյագոյին:
93	5		<u>Վիպակի գեղարվեստական արժանիքները</u> 1. Լեզուն, ոճը: 2. Նկարագրությունների վարպետությունը:	Հեղինակի վարպետության, լեզվի և ոճի առանձնահատկությունների ընկալում	Կինոնկարի դիտում	Խնդրային աշխատանք	Կազմել թեմատիկ բառաշարք:

1	2	3	4	5	6	7	8
---	---	---	---	---	---	---	---

94	6	<p><u>«Օերունին և ծովը» . քննարկում</u></p> <p>1. Պատմվածքը և ֆիլմը:</p> <p>2. Ուշին է հեղինակի տեսակետը. ապացուցել. ա) յուրաքանչյուր կերպարի հատուկ է ողբերգականությունը, և ունայն են մարդկանց բոլոր ջանքերը, բ) մարդուն հաղթել անկարելի է. նրա կյանքը պայքար է:</p>	Քննարկման մասնակցելու, սեփական կարծիք ձևավորելու և հայտնելու հմտությունների զարգացում:		Քննարկում	Գրել կարծիք պատմվածքի մասին:
95		<u>Թեստային աշխատանք</u>				
96		Գրավոր				
97		Գրավոր				
98		Գրավոր				
99		Գրավոր				
100		Կրկնություն				
101		Կրկնություն				
102		Կրկնություն				

Բանաստեղծների գործերի ուսումնասիրության ընթացքում անդրադառնալ տաղաչափության հարցերին: